№ 102 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 13 **1901** ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 13 № 102

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մատենագրութիւն. Նամակ Կիեւից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԶՐՈՅՑ

—

Շուշուց գրած մի նամակի մէջ ես գտնում եմ մի շատ դառն դանդատ։ Ինքներդ դատեցէք.—մինչեւ այժմ Շուշին մի կօպէկ չուղարկից անբերրիութիւնից վնասված դիւղացիների օգտին։ Մի քիչ լուսաբանեցէք այս փաստը եւ ինչ կը ստանաք։ Կորած, յետընկած գիւղեր կրանց աղքատիկ լուման են հասցնում քաղցած ախալքալաքցիներին, իսկ «Արցախական լարձր աշխարհի» կամ, խօսելով ժամանակվից անբանաստեղծական լեզուով, Ղարաբաղի մայրաքաղաքը լուռ ու մունջ է, չուզից եւ չը փափ ուզենայ անհանգստացնել իր զրպանը։

Սա իրողութիւն է։ Նամակագիրը այդ իրողութեան դէմ է բողոքում։ Բայց ես համոզված եմ, որ դա անհիմն բողոք է։ Շուշին իրաւունք ունի սառն ու անտարբեր մնալու։ Որովհետեւ Շուշին ինքն էլ մուրացկան է, իսկ մուրացկանից ողորմութիւն ուզել կարօտեալների համար—այսպիսի կարգ չը կայ աշխարհում։

Մուրացկան, այո, այս բառի ամենահարազատ, ամենամաքուր նշանակութեամբ։ Ամբողջ քաղաքը, սկսած ամենաառաջնակարգ բէկից, որ ծաւալել է, չքանչաններ ու ատիճաններ է ստացել եւ այժմ հանդարտ վայելում է «իր դառն քրտինքով» դիզած հարստութիւնը, մինչեւ վերջին մանրավաճառը, որ քարացնող համբերութեամբ նստված է իր խանութի անկիւնում եւ գնողի է սպասում,—ամբողջ այդ քաղաքը, ասում եմ, մուրացկան է։

Եւ խնդրեմ ինձ չասէք, թէ Շուշում հարուստները քիչ չեն, թէ այնտեղ ամբողջ դատակարգեր առաւօտեան ժամի տասից մինչեւ դիշերվայ ժամի մէկը, երկուսը եւ էլ հեռու նոտած են կլուբում, թուղթ են խաղում, թէ չուշեցի կինը իր գլխարկների, իր «պիկնիկնելի» եւ այլ հազար ու մի պէրանքների չիկով անցել է Թիֆլիսի, Բագուի կանանցից չատ առաջ։ Ես այդ բոլորը գիտեմ։

Հարստութիւնը, նոյն իսկ զեղխութիւնը չէ արգելում, որ մի ամբողջ հասարակութիւն մուրացկան լինի։ Երբ մի տեղ հոգու աղքատութիւն է տիրում, այնտեղ ոչ ոսկին, ոչ գոհարները, ոչ «բօրսայի զարդերը» չեն կարող խանգարել, որ ամենքը լինեն մուրացկաններ, ողորմելի մուրացկաններ։

Յայտնի է, որ մուրացկանութիւնը մարդկային բազմաթիւ խմբերի համար ապրուստի ամենահեշտ միջոց է։ Դուք, ի հարկէ, չատ էք տեսել միանգամայն առողջ, գործելու, աշխատելու միանգամայն ընդունակ մուրացկաններ, որոնք ողորմութիւն են հայցում։ Գիտէք, որ արլպիսիները դատում են այս կերպ. ինչու չարչարվել, ինչու գլուխ պատռել, քարէքար, սարէսար ընկնել, երբ կարելի է հանդիստ էկրպով ձեռք մեկնել եւ ցոյց տալով ցնցոտիները, ողորմութիւն հայցել։

Ես ճանաչում եմ մի մուրացկան, որ մեծ ալողութիւն ունի իր արհեստի մէջ, չնորհիւ այն հանդամանքի, որ լաւ խօսել գիտէ։ Դա մի զարմանալի ընդունակութիւն է. մարդը կոնդնում է հրապարակում, դէմօսթենեան կերճախօսութեամբ թափում է բարեմաղթութիւնների, աղաչանքների մի ամբողջ հեղեղ։ Ո՞ւրպիսի աղդու ձայն, որպիսի առոդանութիւն։ Մի հռետոր է դա եւ որովհետեւ հռետորութիւնը միշտ ունկնդիրներին գրաւել կարողացել է, ուստի եւ նա, ինչպէս ասացի, մեծ ալողութիւն է ունենում ամեն անդամ, երբ մուրացկանի պարկի հետ բաց է անում իր բերանը։

Շուշու մուրացկանութիւնն էլ այս հանդամանքներն ունի։ Մի կողմից—ինչու աշխատել, ինչու քարէքար ընկնել. միւս կողմից՝ ճառախօսութեան բարձր ընդունակութիւն,—ի հարկէ մուրացկանական ճառախօսութեան մասին է խօսքս։

Բայց ինչու միայն Շուշին ցոյց տալ։ Այդ յատկութիւնները ընդհանուր հայկական են։ Հայը դարերից ի վեր մուրացկան էր։ Մուրացկան նոյն իսկ իր ամենալաւ օրերում. նոյն իսկ իր թագաւորների համար թագ նա ուրիշներից էր մուրում։ Սեփական ուժով, սեփական ընդունակութիւններ գործ դնելով, նա չէ կարողացել ոչինչ ստեղծել իր համար։ Եւ ամեն ինչ, որ նրա հոգեկան ընդունակութիւնները, նրա քաղաքակրթական եւ քաղաքական իդէալներն էր ներկայացնում, մուրացած էր, ուրիշի դռներից հաւաքած, ուրիշի գանձերի աւելորդ փշրանքներից ստացած։ Մուրացիկ է եղել հայերի մէջ ամեն մի լաւ, գեղեցիկ հիմնարկութիւն—դպրոց, եկեղեցի, գրականութիւն, իդէալական գաղափար։ Դիրանք ցնցոտիներով պատած, գեանաքարշ ողորմութիւն են հայցել, մի կերպ գոյութիւն են պահպանել, ապրել են, երբ ողորմութիւն են ստացել, մեռել են, երբ փակված է եղել ողորմութեան դուռը։ Եւ հայերի մէջ մուրացկան չեն եղել միայն հասարակական ցեղերը, միայն ամեն ինչ կլանող զրպանները, աւազակները, խաչագողները։

Այս դրութեան հետ մենք վաղուց ենք հաշտվել եւ մեզանում այս կերպով մշակվել է «աղամարդի» մի զարմանալի հասկացողութիւն։ Տղամարդ է, ըստ հայկական հասկացողութեան, նա, ով կարողանում է ուտել, խըլել, զրնել, ով հրապարակում կարմրել չը գիտէ, երբ նրան բռնում են գողութեան մէջ։ Իսկ գործ ստեղծել, հասարակական հիմնարկութիւններն ապահովել մշտական, մնայուն հասոյթներով, քրտինք թափել մի գործ պահպանելու եւ պատում պահպանելու—այս բոլորը ոչ միայն տղամարդութիւն չէ, ըստ հայկական իմաստուն աշխարհայեցողութեան, այլ ուղղակի խենթութիւն, յիմարութիւն։

Եւ ահա թէ ինչ է ստացվում մեր այս ազգային յատկութիւններից։ Շուշում, ինչպէս յայտնի է, գոյութիւն ունի թեմական դպրոց։ Այդ դպրոցին յատկացրված են նիւթական աղբիւրներ, որոնք պիտի ապահովեն նրա տարեկան ծախսերը։ Եւ երկար ժամանակ նա ոչ միայն կարողանում էր այդ միջոցներով իրան պահպանել, այլ եւ ունէր բաւական խոշոր դրամագլուխ (եթէ չեմ սխալվում մօտ 40 հազար)։ Բայց այդ ապահովութիւնը ձեռք էր բերվում ոչ առանց դժուարութիւնների, սաստիկ մրցութեան։ Ուր ազգային մի կտոր հաց կայ, այնտեղ, ինչպէս յայտնի է, վխտում են հազարաւոր բաց բերաններ. զրպանների մի ամբողջ շարք, սկսած եպիսկոպոսական զրպանից եւ վերջացրած գործակալի, տիրացուի, պաշտօնաթող ասատիճանաւորի զրպաններով, խեղդում են հիմնարկութիւնը, ծծում են նրա հիւթերը։ Հոգաբարձութիւնները կուում էին այդ վամպիրների դէմ եւ այնքան բան էին կարողանում խլել նրանց բերանից, որ պահում էին դպրոցը եւ նրա աշակերտների համարեա կէսը—մեծ մասամբ թշուառութեան որջերից դուրս եկած երեխաներ—ձրի ուսում էր ստանում։

Բայց ահա եկաւ վամպիրների թագաւորութիւնը։ Դիմադրող չը կար։ Մէջտեղ «լիազօրները» եւ «ընչանակովի» չողոքորթներն էին պատում, տօնում իրանց կատարեալ յաղթութիւնը։ Ու սկսեցին լափել ամեն ինչ։ Լափեցին դպրոցի եկամուտները, լափեցին դրամագլուխը եւ երբ այլ եւս ոչինչ չէր մնացել լափելու, ընկան դժբախտ երեխաների ծնողների վրա, սկսեցին նրանց էլ լափել։ Մի հատ, մի միակ հատ ձրիավարժ աշակերտ չը մնաց, ուսման վարձը բարձրացրին, թող կոչկակարը, լուացարար կինը, տարիներով հնձի երես չը տեսած գիւղացին տան լափելու նիւթ։ Շատ հարկաւոր է։ Իսկ այնտեղ դպրոցի հասոյթները, վանքական կալուածները վամպիրների բաժին մնացին։

Ի՞նչ անել։ Վամպիրների հետ կուելու համար պէտք է աշխատել, գլուխ պատռել, քարէքար ընկնել։ Բան չունենս... վճռեց հայկական մուրացկանութիւնը, որ չատ լաւ գիտէ, թէ կարելի է հանդիստ էլ ապրել, բաւական է ձեռք մեկնել ողորմութեան համար։ Միջոցը յայտնի է, վաղուց փորձված։ Մնում էր գտնել մուրացկանութեան հռետորներ։ Այդ էլ հեշտ էր։ Եւ ահա Բագուի զրասենեակներում երեւան են գալիս աղաչական թղթեր։ Աղաչում են ողորմութիւն ուղարկել դպրոցին։ Ես ինձ թոյլ կը տամ մի երկու կըտոր բերել այդ մուրացկանական հռետորութիւնից։

«Այո, պէտք է պահպանել հայ վարժարանի հայ աղքատ մանկուտին, որովհետեւ էլ ով պէտք է Արցախի բարձունքների վրա մեր նախնեաց աղօթքը մրմնջայ. էլ ով պէտք է մեր անունն ու յիշատակը պահի աշխարհի գերեզմանատանը, երկրի երեսին։ Էլ ով պիտի տայ մեր տաճարների համար արժանաւոր քահանայութիւն, մեր ս. վանքերի համար պահապան հրեշտակներ»։

Վամպիրական գործավարութեան այս նկարագիրն էլ են ուղարկել մուրացկանները.

«Բայց ինչ եկամուտ կայ այդքան ծախսի դիմաց. գրեթէ ոչինչ. առանց այն էլ աղքատ աշակերտներից կորզված մի փոքրիկ դումար իբրեւ թոշակադրամ. գիւղական աղքատիկ, խեղճ ու կրակ ժողովրդից գանձվող կօպէկանոց տուրքեր—սրբազրամ, մետրիքականի փող, հոգեբաժին, պսակադրամ, մոմագին եւ այլն անուններով, որոնց կանոնաւոր տուրքն իսկ տարիների ընթացքում սրբազան առաջնորդներից թափուր վիճակում անկանոն է եղել։ Անկանոն է եղել եւ դպրանոցի համերաշխութիւնը։ Այժմ, փառք Աստուծու, կայ առաջնորդ, կայ սէր եւ համերաշխութիւն»։

Աղերսական կէտն էլ այս է.

«Մեծարոյ Տեարք, դպրանոցի ապահովութեան գործի սկիզբը դրէք ձեր ջերմեռանդ ոգով, աստուածասէր բնաւորութեամբ, հայկական հոգեզուարճ սիրով։ Օտեցէք ձեր հայրենի վարժարանին եւ նրա ապահովութեան առաջնորդների անաղարտ փառքը վայելեցէք։ Քաղցր պարտք ենք համարում չեշտել եւ այս, յուշ լիցի ձեզ, եղբայրներ, թէ հարստութիւնը երբ ձեռքից գնայ՝ վաստակաւոր ճակտով էլի յետ կը գայ, բայց եթէ դպրանոցը ձեռքից գնայ անապահովութիւնից, ոչ մի ջանքով էլ յետ չի գայ։ Մեր յոյսը ձեզ վրա է, մեր վարդագոյն յոյսերի վրա պսակ բոլորեցէք»։

Մուրացկանական պերճախօսութիւնը, այնուամենայնիւ, ազդեցութիւն չարաւ։ Եւ ինչպէս արդէն հաղորդել է մեր թղթակիցը, դպրոցի տեսուչն ու հոգաբարձուն ստիպված էին անձամբ գնալ Բագու, անձամբ ձեռք մեկնել։ Այդ մուրացկանական առաքելութեան հետեւանքն այն եղաւ, որ դպրոցի ուսուցիչները այս ամառ ռոճիկ կը ստանան։ Իսկ յետոյ։ Նոյն պարկը, նոյն գաւազանը, նոյն «ողորմութիւն արէք»-ը։

Ահա ինչպէս է սիրում ապրել Շուշին։ Այդ մեծապատիւ մուրացկանից կարող է Ախալքալաքի գիւղացին օգնութիւն սպասել։—ի հարկէ ոչ։

Դեռ չատ շնորհակալ պիտի լինէք Շուշուց, որ նա գոնէ ախալքալաքցիներից էլ չէ ողորմութիւն ուզում։ Բայց կարելի է սպասել, որ վամպիրները նրան այդ դրութեան էլ հասցնեն...

Լ.

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Кавказовѣдѣніе (հրատարակութիւն Կենտրօնական գրավաճառանոցի) „Кавказскіе Этюды“ Е. Г. Вейденбаума, Тифлисъ 1901 г.

Մեր առաջ դրած գիրքը—սկզբնաւորութիւն է մի շարք հրատարակութիւնների, որոնք պէտք է նուիրված լինեն կովկասագիտութեան։ Գրքի հեղինակը, Ե. Վէյդէնբաում, որ վաղուց զբաղված է Կովկասի պատմութեան եւ ազգագրութեան ուսումնասիրութեամբ, հանդէս է եկել իր ներկայ աշխատութեամբ սկիզբ դնելու մի օգտաւէտ գործի եւ յանձն է առել անհրաժեշտ ծանօթութիւններ գրելու յետագայ հրատարակութիւնների համար։

Յայտարարված ծրագրով՝ այդ հրատարակութիւնների մէջ պէտք է մտնեն պատմութիւն, ազգագրութիւն, ճանապարհորդութիւն եւ գրականութիւն։ Անկասկած այդ հատորներում տեղ կը գտնեն եւ աշխարհագրական, հնագիտական եւ մարդաբանական աշխատութիւններ, որոնք էական նշանակութիւն ունեն կովկասագիտութեան համար։

Ներկայ գրքի մէջ Վէյդենբաում ժողովել է մի տեղ իր նախկին աշխատութիւնները, նորից մշակելով եւ խմբագրելով նրանց։ Այդ աշխատութիւնները տպված են եղել աշխարհագրական ընկերութեան հրատարակութիւնների եւ տեղական լրագիրների մէջ։

Առաջին յօդուածը վերաբերում է Մեծ-Մասիսի վրա կատարած վերելքների պատմութեան։ Այդտեղ նկարագրված են մանրամասնօրէն նշանաւոր վերելքները եւ առաջ են բերված Ակոռի գիւղի մասին եղած տեղեկութիւնները։ Յօդուածը ուսանելի է եւ կարդացվում է հետաքրքրութեամբ։ Հեղինակը կրիտիկայի է ենթարկում Արարատի մասին եղած աւանդութիւնները եւ աշխատում է ապացուցանել, որ բիբլիական Արարատը ուրիշ սար է եւ ոչ Մեծ-Մասիսը։ Նա ցրում է եւ այն աւանդութիւնը, որ Ակոռի անունը իբր թէ առաջ է եկել արկ-ուռի բառերից։ Սակայն հեղինակը սխալ է դործում, կարծելով, որ Ակոռիի ժողովրդական անունը Ախուրի է։ Բուն հայկական անունը Ակոռի է, որ թուրքերը փոխել են եւ դարձրել Ախուրի։

Հետաքրքրական են սրբազան անտառների եւ ծառերի մասին ուսումնասիրութիւնը, Տօտլէբէնի արշաւանքը դէպի Անդրկովկաս 1769—1771 թուերին, Պոտեմկինի, Երմօլովի, Պասկեվիչի, Պուշկինի եւ ուրիշ կովկասեան ռուս գործողների քարաքտերիստիկները եւ նրանց կեանքից վերցրած դէպքերը։ Մանրամասնութիւնների մէջ կան կարծիքներ, որոնց վերաբերութեամբ կարելի է վիճել հեղինակի հետ, բայց ընդհանրապէս գիրքը կրում է իր վրա անաչառ եւ բարեխիղճ վերաբերմունքի կնիք դէպի գործողները եւ պատմական եղելութիւնները։

Ք.

—

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) Л. Ханъ-Аговъ. „Лучшій способъ подъема воды“ փոքրաչափ, 88 երես, պատկերազարդ, Թիֆլիս, գինն է 50 կոպէկ, 2) „Матеріалы по вопросу о фальсификаціи пищевыхъ продуктовъ“ մեծադիր, 360 երես, հրատարակութիւն „Вѣстникъ Винодѣлія“ ամսագրի, Օդեսսա, 1901, 3) И. Абозиинъ „Птицеводство“ միջակադիր, 224 երես, պատկերազարդ, Պետերբուրգ, 1901.

## ՆԱՄԱԿ ԿԻԵՎԻՑ

—

Ապրիլի 24-ին

Շտապում եմ աւետել Թիֆլիսին, որ նրա սիրելի երգչուհի օր. Պապայեանը այստեղ էլ փայլեց իր գեղեցիկ ձայնով ու մտածված խաղով «Пиковая дама» օպերայում, Լիզայի դերում։ Մենք չատ էինք կարդում Թիֆլիսի լրագիրներում եւ լսում օրիորդին ճանաչողներից, որ նա հիանալի է այդ դերում. նոյն դերը նրան ճանապարհ բացեց կայսերական օպերայում եւ այժմ մենք, անձամբ լսելով օրիորդին, համոզվեցինք, թէ նա որպիսի ոյժ է ներկայացնում օպերայի համար։ Երբ օրիորդը երգեց «Истомилась» արիան, թատրոնը դղրդաց բուռն ծափահարութիւնից եւ լսողների միահամուռ պահանջով օրիորդը ստիպված էր կրկնել այդ արիան։

Այդ օպերայի համար Մոսկվայից եկել էր կայսերական օպերայի տենոր Կլեմենտեվը, բայց նա այնքան էլ դուր չեկաւ հասարակութեան։ Կիեւը մի վատ սովորութիւն ունի—անպատճառ համեմատել ուրիշ երգիչների հետ եւ չափազանց սիրում է իր հին ծանօթներին. այժմ արդէն առանց ձայնի Մեդվեդեւը մեծ փուրոր է հանում, երբ լինում է Կիե-

վում, մինչդեռ նոր, անծանօթ երգիչը, նոյն իսկ եթէ լաւ է երգում, այնքան էլ չէ գրաւում հասարակութեան հաճակրանքը։

Այստեղ երկու անգամ երգեց եւ պ. Ամիրջանը, բայց նրա վրա ուշադրութիւն չը դարձրին, որովհետեւ նա, բացի բաւականին ուժեղ բարիտոնից, ուրիշ ոչ մի աչքի ընկնող յատկութիւն ցոյց չը տուեց։

Եակօվլեվը արդէն չունի այն գեղեցիկ ձայնը, որ ունէր առաջ. մնացել է միայն խաղը եւ նրա նման Օնէգին երեւի լինելու չէ։

Ամենից մեծ աջողութիւնը Կիեւում վիճակված էր Սաբինօվին (Մօսկվայի կայսերական օպերայի տենօր), որը Լենսկու դերում աննման է թէ խաղով եւ թէ մանաւանդ ձայնով։ Մեր քաղաքի օրիորդ—տիկինները գըժվածի նման էին. նրանց այդքան յափշտակումը Սաբինօվի երգելով ստեղծեց նոր ածական —Сабинянки (Հոմայեցոց сабинянки). շատ շատերը նոյն իսկ ծիծաղելի էին իրանց գոհունակութիւնը արտայայտելիս։

Օր. Պապայեանը վերջին անգամ դուրս եկաւ «Գիւղական պատիւ» օպերայում եւ ապա մեկնեց Օդեսա։

Թատրոնը միշտ լի էր, երբ երգում էր Սաբինօվը, իսկ միւսները այնքան էլ չէին գրաւում մեծամասներին։ «Кіевлянинъ»-ի բեցենզենտը մինչեւ վերջը ընդգծում էր օր. Պապայեանի «անընդունակութիւնը»։ Իսկ Կիեւի աչքի ընկնող մուզիկալ-կրիտիկը—Զեչոտը—միշտ գովում էր օրիորդին։

Լսեցի, որ օպերան Խարկովում եւ Կիեւում ստացաւ 50 հազար, բայց որքան աշխատեց Զուրաբովը—այդ արդէն ինքը գիտէ։

Նուսէ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մայիսի 8-ին

Թանգոյեան Աստուածածին եկեղեցու ծխականներից մի չանիսը լուրեր են տարածում թէ՝ ճիշդ չէ այն, որ մինչեւ օրս չեմ ստացել նախորդիցս եկեղեցական հաշիւները եւ գործերը, եւ մեղադրում են, որ արձակել եմ երգեցիկ խումբը։ Ուստի թոյլ տուէք ինձ «Մշակի» միջոցով յայտնելու յարգելի ծխականներին, որ նախկին երէցփոխ պ. Սարգիս Ղամազեանից ես չեմ ստացել ոչ մի հաշիւ եւ գործ, բայց ի այն, որ այժմս պահանջում են ինձանից պաշտօնական գրութիւններով 1500 բուբլի՝ 1899—1901 տարիների համար արքունական, հողային եւ քաղաքային հարկեր, եւ այս պատճառով էլ ստիպված էի առ այժմս արձակել եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը։

Երէցփոխ՝ Խ. Տէր-Մարգարեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թագաւոր-Կայսրի թագադրութեան տօնի պատճառով, որ տեղի կունենայ վաղը, երկուշաբթի, մայիսի 14-ին, «Մշակի» հետեւեալ 103 համարը լոյս կը տեսնի չորեքշաբթի, մայիսի 16-ին։

—

Մեր Ախալքալաքի թղթակիցը հեռագրում է մեզ հետեւեալը։ «Այսօր, մայիսի 12-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի սեսսիայում քննվում էր Փոքր-Սամսար գիւղի քանդինգ բնակիչների գործը, որոնք մեղադրվում էին իշխանութեան ցոյց տուած դիմադրութեան մէջ։ Բոլոր մեղադրեալները արդարացրած են, բացի երեքից, որոնք դատապարտված են եօթնօրեայ բանտարկութեան։ Մեղադրեալներին պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Կրասօվսկի եւ Տիգրան Յովհաննիսեան»։

—

Մենք յայտնել էինք, որ վրաց հողային բանկը նշանակել էր 2000 բուբլի Թիֆլիսի նահանգի վիճակագրական հետազօտութեան համար։ Այդ գումարը պէտք է յանձնվի Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան յիշած նպատակի համար։ Ուրբաթ, մայիսի 11-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը իր հերթական նիստում, քննելով բանկի առաջարկը, որոշեց ընդունել գումարը եւ գործադրել յատուկ յանձնաժողովի ձեռքով, որի մէջ երկու ներկայացուցիչ կը լինեն բանկի կողմից։

—

Կովկասեան ջրաբաշխական շրջանի վարչութիւնը քիչ ժամանակ առաջ ուղարկեց Պետերբուրգ Մուղանի անապատում 6,077 դեսեատին հող ոռոգելու մի ընդարձակ ծրագիր։ Այս ծրագրով յիշված տարածութեան ոռոգումը կը նստի 241,000 բուբլի կամ, ուրիշ խօսքով, իւրաքանչիւր դեսեատինի համար հարկաւոր կը լինի ծախսել 40 բուբլի։

—

Հինգշաբթի, մայիսի 10-ին, Թիֆլիս հասաւ Պետերբուրգից Կովկասեան ուսումնարանական շրջանի նախկին հոգաբարձու, պետական խորհրդի անդամ Կ. Պ. Եանօվսկի։ Կայարանում նրան դիմաւորեցին Կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութեան ներկայացուցիչները, Թիֆլիսի դպրոցական հաստատութիւնների կառավարիչները, նոյնպէս եւ քաղաքային տարրական ուսումնարանների ուսուցիչները եւ ուսուցչուհիները։

—

Թիֆլիսում շարունակվում է խիստ փոփոխական եղանակը։ Օր չէ անցնում, որ անձրեւ չը գայ։ Օրվայ մէջ մի քանի անգամ երկինքը ծածկվում է ամպերով եւ պարզվում։ Շրջակայքում մարգագետինների եւ արօտների բուսականութիւնը աճել է աջող կերպով եւ խոտի պակասութիւն չի զգացվի։

—

Դեռ 1897 թուին Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը միջնորդութիւն էր յարուցել երկրագործութեան մինիստրութեան առաջ՝ հիմնելու Թիֆլիսում ոստայնագործութեան ուսումնարան-արհեստանոց։ Մինիստրութեան գիւղական տնտեսութեան բաժանմունքը, քննելով այդ միջնորդութիւնը Կովկասեան տնայնագործական կոմիտէի կարծիքի հետ միասին, որոշեց, փոխանակ հիմնելու Թիֆլիսում ոստայնագործութեան առանձին ուսումնարան-արհեստանոց, առաջարկել Թիֆլիսի չերամապահական կայարանին ընդարձակել այն մետաքսագործական փոքրիկ արհեստանոցը, որ այժմ կայ այնտեղ, եւ բացի դրանից՝ հիմնել ներկարարական արհեստանոց՝ բուրդ եւ մետաքս ներկելու համար։

—

Երկաթուղային գծերի տեղական վարչութիւններին առաջարկված է մշակել նոր կանոններ այն փոխատութիւնների վերաբերութեամբ, որոնք տրվում են երկաթուղային վարչութիւնների կողմից կայարաններում դրսված հացահատիկների եւ գիւղատնտեսական ուրիշ արդիւնաբերութիւնների փոխարէն։

—

Մայիսի 11-ին, Թիֆլիսի 5-րդ քաղաքամասի «Винный рядъ» կոչված փողոցում, մի դիւնեատան մէջ մի խումբ բանուոր մարդիկ, սեղանի չուրջ նստելով, երկար ժամանակ գինի են խմում եւ միմեանց կենացներ առաջարկում։ Գինու ազդեցութեան տակ գտնվելով, սկսում են վիճել իրար հետ. վէճը սուր կերպարանք է ստանում։ Դրանցից մէկը դանակով վերքեր է հասցնում իր երեք ընկերներին, իսկ այդ դանակ խփողին մի ուրիշ ընկերը, նոյնպէս դանակի մի հարուածով, մէջքի կողմից մի զօրեղ վերք է հասցնում։ Ոստիկանութիւնը այդ չորս վիրաւորվածներին էլ տարաւ Միքայէլեան հիւանդանոցը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 3-ին Երեւանի քաղաքային դումայի նիստում կարդացվեց կովկասեան Գիւղատնտեսական ցուցահանդէսին դրամական նպաստ տալու առաջարկը։ Դուման որոշեց քաղաքի միջոցներից նպաստ տալ 500 բուբլի»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Շուշու ժամանաւոր դպրոցի տէր՝ ուսուցիչ պ. Ս. Իւզբաշեանցը թոյլատրութիւն ստացաւ տեղափոխել դպրոցը Բագու։ Պարոնը բարեխղճութեամբ վարեց իր ծանր պաշտօնը մեր քաղաքում ամբողջ 17 տարի։»

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑԻՑ մեզ գրում են. «Մեր գիւղում աւելի քան 10 տարի գոյութիւն ունի դպրոց, ուր մեր եւ շրջակայ գիւղերի երեխաներն ուսանում են։ Մայիսի 1-ին մեր տանուտէրը ժողով կազմեց, որը մի համախօսականով որոշեց կամ փակել դպրոցը, կամ նախկին համախօսականով խոստացած տարեկան 500 բուբլին չը տալ։ Ընտրեցին 4 հոգի հաւատարմատարներ, որոնցից մէկը ինքը տանուտէրն է։ Դրանք պէտք է միջնորդեն, ուր հարկն է, որ գիւղացիները ազատվեն ուսումնարանին վճարելիք գումարից։ Ասում են, որ գաւառապետը մերժել է դրանց խնդիրը»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 16-ին իրաւասուների լրացուցիչ ընտրութիւններ են լինելու։ Պէտք է ընտրել 10 ձայնաւոր եւ 8 կանդիդատ»։

—

ՇՈՒՎԱԻԷՐԻՑ մեզ գրում են. «Այս տարի թէպէտ սկզբից երաշտը փչացրել էր արտերը, բայց տեղացող անձրեւների շնորհիւ նորանք նորից կենդանութիւն ստացան։ Այժմ արտերին վտանգ են սպառնում մկները»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Անցեալ կիրակի Գառնակերեան եպիսկոպոսը երեք տիրացուների ձեռնադրութիւն կատարեց եւ դեռ սպասում է 12 տիրացուների ձեռնադրութեան հրամանին Էջմիածնից. դրանք բոլորն էլ տգէտներ են եւ մեր թեմի գիւղերի վրա են ձեռնադրվում, բացի մի ճեմարանականից, որը իր աննպաստ անցեալն ունի եւ ձեռնադրվում է մեր քաղաքի Ագուլեաց մայր եկեղեցու համար»։

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑԻՑ մեզ գրում են. «Այժմ մեր գիւղումն է անասնաբոյժ Ռումաչկէվիչ, որը ամեն օր զննում է սարերը չուող թուրքերի անասունները խճուղու վրա»։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Մալիւմաթին» գրում են Ղօնիայից, թէ փոքր-ասիական գորգերի ցուցահանդէսը, որ կազմված է Ղօնիայի վալի Ֆէրիդ փաշայի նախաձեռնութեամբ, բացվել է մեծ հանդէսով։ Բացմանը ներկայ էին զինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնները, հիւպատոսական մարմինը, ուլէմաները, Ղօնիայի եւ Անատոլիայի միւս քաղաքների ներկայացուցիչները, որոնք եկել էին յատկապէս ցուցահանդէսին ներկայ լինելու։ Ի ցոյց են դրված աւելի քան 2000 գորգեր Փոքր-Ասիայի զանազան վիլայէթներից։ Էքսպոնենտներին մրցանակներ տալու համար նշանակված է քննիչ ատեան։ Տեղական արդիւնագործութեան այս առաջին ցուցահանդէսը, թիւրք լրագրի ասելով, արժանացել է Սուլթանի բարձր ուշադրութեանը։ Ղօնիայի ցուցահանդէսը պէտք է սկիզբ ծառայէ եւ ուրիշ ցուցահանդէսների համար, որոնք պէտք է կազմվեն այսուհետեւ տեղական արդիւնագործութիւնը քաջալերելու եւ նրա մէջ կատարելագործութիւններ մտցնելու նպատակով։

—«Իգդամ» լրագրին հաղորդում են Բաղդադից, թէ հնագէտների մի խումբ, որ հետախուզութիւններ է կատարում Կօլվէյի ղեկավարութեամբ հին Բաբելօնի չրջանում, գտել է Նաբուգոդոնոսորի պալատը, որ յայտնի է ս. Գրքից։ Թղթակիցը ասում է, թէ, հնագէտների կարծիքով, Հերոդոտ սաստիկ չափազանցացրել է Բաբելօնի չափերը, որովհետեւ, նայելով աւերակներին, Արեւելքի հին Պարիզը հազիւ թէ բռնում էր այժմեան Պարիզի 1/5 մասին հաւասար տարածութիւն։

—«Անահտիտ» մէջ կարդում ենք. «Անաթոլ Ֆրանս եւ Եգիպտոսի հայերը։—Անաթոլ Ֆրանս, որ վերջերս Եգիպտոս ճամբորդեց, շատ սիրուն ընդունելութիւն մը գտած է այնտեղի հայերուն կողմէ, որոնք իրենց երախտագիտութիւնը փութացած են յայտնել Ֆրանսացի վարպետին՝ այն աջակցութեան համար, զոր նուիրեց մեր դատին։ Գահիրէի հայերը նուիրած են արծաթ գրիչ մը եւ Աղէքսանդրիոյ հայերը՝ Շապանեանի մէկ ծովանկարը։ Անաթոլ Ֆրանս, խորապէս զգացուած՝ իր չնորհակալութիւնը յայտնած է այս համակրական ցոյցերուն համար։

—«Հայկական Միութիւնը».—Բարիզաբնակ հայերու խումբ մը հիմնեց ընկերութիւն մը, «Հայկական Միութիւն» անունով։ Այս ընկերութիւնը Պարիզի հայութիւնը Ֆրանսիայի մէջ պաշտօնապէս ներկայացնող մարմին մը պիտի չըլլայ, այլ պիտի ունենայ հայ ժողովրդին բարոյական ու նիւթական շահերուն պաշտպանմանը նպաստելու ընդհանուր նպատակը, եւ իրեն անդամ պիտի կրնան ըլլալ ոչ միայն Պարիզի հայերը, այլ աշխարհիս ամէն կողմը գտնուող այն բոլորը հայերը, որ այս նպատակին կը համակրեն։ Այդ նախաձեռնութիւնն ունեցող հայերու խումբը, որ իր մէջ կը պարունակէ Պարիզի հայ գաղութին ամէն կարգի հայերէն ներկայացուցիչներ, ընտրեց արդէն առժամեայ դիւան մը, որ պիտի ջանայ այս ընկերութեան համար արտօնութիւն ստանալ Ֆրանսական կառավարութենէն եւ անոր հիմնարկութեան ու կազմակերպութեան նախնական բոլոր աշխատութիւնները պիտի կատարէ։ Այդ դիւանը կը կազմուի հետեւեալ անձերէն,—պ.պ. Իսքէնտէր, ատենապետ, Մ. Թամամշեան, նախկին տնօրէն Թիֆլիսի պանքային, դեր-ատենապետ, Ա. Փրիտոնեան, Թիֆլիսի ծանօթ վաճառականներէն, գանձապահ, Ա. Զօպանեան, ատենադպիր, Թնկր, սեղանաւոր, Կամպարեան, նախկին ուսուցիչ Մօսկուայի համալսարանին, Մինաս Զերազ, Փեհլիվանեան, ակնավաճառ, եւ Բելեկեան խան, հնութեանց վաճառական։ Այս «Հայկական Միութիւնը», որու մասին մանրամասնօրէն պիտի խօսինք մեր յառաջիկայ թուով, ոչ մէկ առնչութիւն չունի հայ բանտարկեալներու ի նպաստ հանգանակութիւն բացող նոյնանուն ընկերութեան հետ։

# ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

## ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Անակընկալ դէպքը, որի մասին ես ակնարկեցի իմ անցեալ Մանրանկարում, հետեւեալն էր։

Երբ իմ երեւանեան ծանօթների շրջանից վերադարձայ հիւրանոց, այնտեղ պատահեցի Թիֆլիսից եկած իմ շատ լաւ ծանօթ N ինժենէրին։

—Դուք այստեղ, հարցրինք մենք միմեանց միաժամանակ։

Նա յայտնեց, որ շատ շտապ գործով եկել է Երեւան մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ ժողովելու երկաթուղային գծի վերաբերութեամբ։

—Ես այստեղից, ասաց նա, պէտք է գնամ Նախիջեւան եւ Օրդուբաթ, եւ չուտով վերադառնամ։ Գնանք միասին։

Ես բացատրեցի, թէ ինչու եմ Երեւանում եւ ասացի, որ պատրաստվում եմ Թիֆլիս վերադառնալու։

—Գնանք միասին, կրկնեց նա։

—Բայց ես ժամանակ չունեմ, յայտնեցի իրան, առանց այն էլ ուշացել եմ։

—Ես քեզնից կը խլեմ միայն չորս օր ժամանակ։ Երեք օր գնալ-գալը, մի օր էլ կը մնանք Օրդուբաթում։ Ճանապարհորդութեան համար ես ունեմ բոլոր յարմարութիւնները՝ թեթեւ ու լաւ կառք եւ բացառիկ արտօնութիւններ։

Ինձ համար շատ հաճելի էր ճանապարհորդութիւնը, ես միայն չէի ցանկանում շատ ուշանալ։

Փոքր տատանումից յետոյ վերջապէս համաձայնվեցի։

Պէտք է ճանապարհ ընկնէինք գիշերով։ Այդ կարելի էր ապահով կերպով, որովհետեւ լուսինը ուշ էր դուրս գալիս եւ մեզ կօգնէր իր լոյսով։

—

Ես պատրաստվեցի նոր ճանապարհորդութեան համար։ Վերջացրի հաշիւները հիւրանոցի հետ եւ օգտվելով ազատ ժամից՝ սկսեցի զբաղվել իմ յուշատետրով եւ գրել այնտեղ իմ դիտողութիւնները եւ տպաւորութիւնները։

Ես ոչ մի կերպ չէի կարողանում մոռանալ մուրհակով քահանայ ձեռնադրելու դէպքը. ես չէի մարսում այդ բանը, չէի հաւատում լսածներիս։

Ցանկարծ դուռը թխկացրին։

—Ո՞վ է, ներս եկէք, հրաւիրեցի ես։

Ներս եկաւ Երեւանի իմ նոր ծանօթներից մէկը։ Ես շատ ուրախ էի նրա գալուն։ Նա եկել էր դարձեալ պատմելու մի քանի հետաքրքրական բաներ։

—Ինձ անհաւատալի են թւում, ասացի նրան, մուրհակով ձեռնադրութեան ձեր բոլոր պատմածները։

—Ի հարկէ, մուրհակի մէջ ոչինչ չէ գրած այդ մասին, նկատեց նա քմծիծաղով։ Այդ էր պակաս։

—Ձեր փոխանորդը կը հերքէ եւ նրա հերքումը հաւանական կը թուի։

—Եթէ հերքում կը լինի Երեւանից, ասաց նա, այն ժամանակ դուք կարող էք մատնացոյց լինել պաշտօնական գրութիւնների վրա։

—Ի՞նչ գրութիւնների, հարցրի ես։

Առաջին թուղթը, որ ուղարկել է թեմական փոխանորդը Նոր-Բայազէտի գործակալ Եղիազար քահանայ Տէր-Միքայէլեանին եւ պահանջել է մուրհակով նշանակված պարտքը, գրվել է 1900 թուի յուլիսի 20-ին եւ կրում է 420 համարը. երկրորդ թուղթը գրված է օգոստոսի 23-ին. իսկ այս տարի կրկնված է նոր գործակալին։ Այս մանրամասնութիւնները հերքման համար անհրաժեշտ են։ Բացի այդ թղթի մէջ նշանակած է ոչ թէ 35, այլ 32 բուբլի։

Ես զետեղեցի յուշատետրիս մէջ այդ տեղեկութիւնները։

—Ի հարկէ, դժուար է պնդել, թէ մուրհակը տրված է որոշ նպատակի համար, բայց թեմական միջամտութիւնը եւ նրա պահանջը նորընծայ քահանայից ընորոշ են։

Ծանօթս խնդրեց, որ ես նրա անունը գաղտնի պահեմ։

Ես խոստացայ։

Մենք բաժանվեցինք։

—

Շուտով մենք ճանապարհ ընկանք։

Ես չեմ նկարագրի իմ անցած ճանապարհները, որովհետեւ դա ինձանից կը խլէր շատ ժամանակ։ Մենք արագ առաջ էինք գնում գիւղերի եւ անապատների միջով։ Երբ որ առաւօտեան արեգակը դուրս եկաւ, մենք արդէն մօտեցել էինք Դավալու գիւղին։

Հրաշալի էր առաւօտը Արարատեան դաշտավայրում։ Մասիսի ոսկեզօծ գլուխը վաղուց ազդարարել էր մեզ արեգակի ծագելը, եւ դրանից յետոյ անցաւ մի քանի րոպէ մինչեւ արեւի շողերը դիպան մեր աչքերին։

Անցանք Շարուրի տափարակը եւ երեկոյեան հասանք Հին-Նախիջեւան քաղաքը։

Այդտեղ ինժենէրը երկու ժամվայ գործ ունէր։ Այնուհետեւ պէտք է փոքր ինչ հանգըստանայինք եւ արեւը չը ծագած ճանապարհ ընկնէինք դէպի Օրդուբաթ։

Ես օգտվեցի դէպքից տեսնվելու մի քանի անձանց հետ եւ շրջագայելու քաղաքում։ «Մշակի» թղթակիցները, որոնց իսկոյն գտայ, յանձն առան առաջնորդելու քաղաքում եւ պատմեցին շատ ընորոշ բաներ։

Հին-Նախիջեւանը ինձ վրա ծանր տպաւորութիւն թողեց։

Չը նայելով այն հանգամանքին, որ քաղաքում հաստատվել է ինքնավարութեան նման մի բան, վան դպրոցներ, աւելացել է կանոնաւոր շինութիւնների թիւը եւ նոյն իսկ թուրքերի մէջ նկատվում է մի փոքր շարժում դէ-

պի կրթական գործը եւ եւրոպական նիստ ու կացը, այնու ամենայնիւ. Հին-Նախիջեւանի բարոյական մթնոլորտը խեղդող է եւ ճնշող։

Հին ասիական, պարսկական ոգին դրել է իր կնիքը առօրեայ կեանքի վրա եւ տիրապետող է դեռ հանդիսանում։

Ծեծ, կռիւ, հայհոյանք, կոպտութիւն,
Կռիւ, ծեծ, կոպտութիւն հայհոյանք,
Հայհոյանք, ծեծ, կոպտութիւն, կռիւ,
Կոպտութիւն, ծեծ, կռիւ, հայհոյանք։

Կարող էք այդ բառերը զանազան կերպ դասաւորել եւ նրանց վրա աւելացնել ասիական ուրիշ մի քանի բարեմասնութիւններ։

Ես առաջ կը բերեմ ինձ հաղորդած մի քանի դէպքեր։

—

Իմ գալուց մի քանի օր առաջ կլուբում պատահել էր մի տխուր անցք։

Տեղական խաների եւ բէգերի մի խումբ սկսում է քէֆ անել կլուբում։

Ղարաբաղից եկած Նուազածու Շիւքարը ոգեւորում է քէֆ անողներին։

Մարդկանց բացականչութիւնները, թառի ու դափի ձայնը զղրդեցնում են դահլիճը։ Մարդիկ տաքցել են, կրքերը գրգռվել։

Այդ ժամանակ ներս է մտնում կլուբ անասնաբոյժ Ա-ակին իր կնոջ հետ։ Տեսնելով այդ աղմկալի քէֆը՝ յայտնում է իր դժգոհութիւնը։

—Այդպէս քէֆ կարող էք դուք ձեր տանը սարքել, ասում է նա, եւ ոչ կլուբում։ Պէտք է պահպանէք յայտնի կանոններ եւ ուրիշներին չը խանգարէք։

—Այդ ձեր գործը չէ, գոռում են նրա վրա։

—Ես պահանջում եմ։

—Շատ էլ պահանջեցիր։ Մի քիչ սառ ջուր խմիր։

Անասնաբոյժը բարկանում է։ Քէֆ անողները կատաղած յարձակվում են նրա վրա։ Աղմուկի վրա ներս են թափվում քէֆ անողների ծառաները, որոնք դրսում կանգնած են լինում։ Եւ ծառաները օգնում են իրանց տէրերին։

Կուռղների գոռոցի վրա ներս են վազում կլուբի ընթերցարանում գտնված անդամները եւ վերջ դնում կռիւին։ Անասնաբոյժին խլում են ծառաների ձեռքից եւ դուրս քաշում սեղանի տակից, ուր նա թաղնվել էր։

—

Այդ դէպքից մի քանի օր առաջ չորս հանթարկվել էին մի խումբ Թուրքերի բարբարոսական ծեծին։

Պատճառը։

Հայերը փողոցով անցնելու ժամանակ տեսնում են, որ երկու Թուրք վէճի են բռնվել եւ միմեանց սաստիկ հայհոյում են, արտասանելով անվայել բառեր։

—Վերջ դրէք ձեր վէճին, ամօթ է, ասում են նրանց հայերը։

—Ձեզ ինչ, դուք ո՞վ էք, ինչ իրաւունքով էք միջամտում մեր վէճին, գոռում են Թուրքերը հայերի վրա։

Աղաղակի վրա մարդիկ են հաւաքվում ամեն կողմից։ Թուրքերը, չը քննելով բանը եւ տեսնելով, որ հայ ու Թուրք ծեծվում են, յարձակվում են հայերի վրա եւ նրանց մի սարսափելի ծեծ տալիս։

—«Աղա վուրքն», (խփեցէք) լսվում է ամեն կողմից։

—«Աղա վուրքն», գոչում է եւ ոստիկանը, որ չտապում է կռւի տեղը։

Ծեծվողներին ուղարկում են բանտ, որտեղ նրանք կը տան բացատրութիւններ։

Եւ նրանք կը ճանաչվեն մեղաւոր։ Ի՞նչ գործ ունէին նրանք վիճողների հետ։ Ո՞վ էր նրանց իրաւունք տուել խրատներ կարդալու։

Միւս անգամ խելօք կը լինեն եւ չեն միջամտի ոչ վէճերի եւ ոչ կռիւների մէջ։

—

Ինձ պատմեցին Նօվրուզ-բայրամի տօնի գիշերը պատահած սաստիկ կռիւների մասին, Զահուկ գիւղում ջրպետի ընտրութեան ժամանակ տեղի ունեցած մեծ անկարգութիւնների մասին, որոնց համար հարկաւոր եղաւ գաւառապետի այնտեղ գնալը եւ մի քանի մարդկանց բանտ նստեցնելը...

—Բաւական է, ի սէր Աստուծոյ, ընդհատեցի ես։ Վերջ չը կայ ձեր ծեծերի պատմութեան։

—Ի՞նչ արած, ասացին նրանք, այսպէս է մեր իրականութիւնը։

Խօսքը փոխեցինք եւ կենտրոնացրինք նրան հասարակական կեանքի վրա։ Զրոյցը շատ չուտ սպառվեց, որովհետեւ Նիւթը Նախիջեւանի համար շատ փոքր էր եւ անբովանդակ։

Նախիջեւանի հայերի իսօսակցութեան առարկաներից մէկն էլ Սիօն վարդապետն էր։

—

Սիօն վարդապետ։

Շատ բաներ իմացայ նրա մասին, շատ կատակներ լսեցի նրա գործունէութեան վերաբերութեամբ։

Սակայն, ինչպէս երեւում է, նրան չեն հասկանում։

Սիօնը թոյլ չէ տալիս, որ մի օրում մի եւ նոյն աւազանում երկու երեխայ մկրտվի։

Այդ անկարելի է Նրա կարծիքով։

—Իսկ եթէ, հարցրեց մէկը, երեխաներ շատ ծնվեն, այն ժամանակ ինչ պէտք է անել։ Մի քանիսը կարող են անկնունք մնալ։

—Դարդ մի անէք, պատասխանեց միւսը, այն ժամանակ նոր եկեղեցիներ կը կառուցվեն եւ նոր աւազաններ կը շինվեն։ Այդպիսով կաւելանայ եկեղեցիների թիւը։ Անին հազար քիլոմէտր դէպի արեւմուտք Պատինֆուից, ու մի եկեղեցի է ունեցել երեւի մկրտողների թւի համեմատ։

Սիօնը հիմք է բռնում եկեղեցու հին աւանդութիւնները։

Իսկ ժողովուրդը նրան չէ հասկանում եւ դնահատում։

—Եթէ աւելի հին բաների ետեւից ընկնենք, ասաց խօսակիցներից մէկը, այն ժամանակ պէտք է պահանջենք, որ երեխան մկրտվի գետում, ինչպէս կատարվեց Փրկչի մկրտութիւնը։

—Այդ էլ կարող է Սիօնը պահանջել, նկատեց քմծիծաղով մի ուրիշը։

—

—Շատ սիրում է մեր Սիօնը՝ առաջաբաններ ասել։

—Ինչպէ՞ս թէ առաջաբաններ, հարցրի ես։

—Մի գլուխ խօսում, խրատում է։

—Էհ, ինչ վնաս, նկատեց մէկը։

—Լսեցէք. երկու շաբաթ առաջ ժողովվել էինք երէցփոխական հաշիւները քննելու եւ նոր երէցփոխ ընտրելու։ Սիօնը մի այնպիսի երկար առաջաբան ասաց, որ քիչ մնաց վեր կենայինք եւ փախչէինք ժողովից։

—Ի՞նչ էր ասում, հարցրի ես։

—Նա երկար խօսում էր այն բանի դէմ, որ ժամկոչն է ման ածում էջմիածնապատկան տուփը եւ փող ժողովում, մինչդեռ այդ սրբութիւնը չը պէտք է գտնվի փողոցային մի արարածի ձեռքում, այլ երէցփոխը ինքն է պարտաւոր գանձանակ պտտեցնել։

Արժէ՞ այդ մասին այդքան խօսել։

—Բայց նա այդ բանի մասին երկար խօսում էր։ Վերջապէս դժգոհութիւն յայտնեցինք։ Նա վերջ տուեց իր խրատներին եւ ճառին։ Ընտրութիւնը կատարեցինք եւ ամենքս դուրս թափվեցինք դահլիճից, որտեղ մնաց միայն ինքը Սիօնը, որը կարող էր ազատ ճառախօսել դատարկ պատերի համար։

—Դուք անարդար էք, նկատեց խօսակիցներից մէկը, մեր հոգեւորականներից մենք շատ քիչ ենք լսել ճառ եւ քարոզ։ Սա էլ մի նորութիւն է մեզ համար։

—

Ինձ շատ հետաքրքրեցին Թուրքերի մէջ արթնացած գիտակցութեան մի քանի արտայայտութիւնները։

—Դժբաղդաբար մասսան դեռ շատ է անտարբեր եւ դեռ շատ է խանգարում կուլտուրական գործերին, նկատեց մէկը։

Շահի ճանապարհորդութիւնը, աւելացրեց միւսը, եւ Պարսկաստանի բարի տրամադրութիւնը դէպի եւրոպական կարգերը, բարերար ազդեցութիւն ունեն այստեղի Թուրքերի վրա։

—Հայերը Նախիջեւանում թէեւ աւելի կրթված եւ կուլտուրական տարր են կազմում, սակայն չեն կարողացել հեղինակաւոր դիրք ստեղծել եւ զգալի կերպով ազդել խոշոր գործերի վրա։

—

Ես չէի կարող երկար շարունակել իմ շրջագայութիւնը, պէտք է վերադառնայի կայարան։ Երկար խօսակցութիւնը, որ ունեցայ ծանօթներիս հետ, պարզեց Նախիջեւանի կեանքի շատ կողմերը։

Նախիջեւանի նման տեղում մեծ դեր են կատարում տեղական վարչութիւնը եւ ոստիկանութիւնը։ Երբ որ նա զանցառու է գտնվում եւ թուլանում է, իսկոյն գլուխ է բարձրացնում վայրենութիւնը։

Ես մտադիր չեմ օրինակներ բերել։ Դա հեռու կը տանէր մեզ։ Մինչդեռ դեռ շարունակվում է իմ ճանապարհորդութիւնը։

—

Մի փոքր հանգստանալուց յետոյ՝ մենք դեռ լոյսը չը բացված ճանապարհ ընկանք Նախիջեւանից։

Կէսօրին հասանք Օրդուբաթ։ Այդտեղ իմ ուղեկից ինժենէրը մի ամբողջ օրվայ գործ ունէր։ Նա պէտք է պտտէր շրջակայքում, ժողովէր տեղեկութիւններ։

Ես օգտվեցի դէպքից եւ ուղեւորվեցի դէպի Ագուլիս, Զօկստանի այդ հռչակաւոր մայրաքաղաքը։

—Միայն չուշանաք, զգուշացրեց ինժենէրը, վաղը այս ժամին պէտք է վերադարձած լինէք։

Ես խոստացայ։

Կառքը շարժվեց դէպի Ագուլիս։

Վրթին

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

11 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 10-ին Պետերհոֆում, Բարձրագոյն ներկայութեամբ, տեղի ունեցաւ եկեղեցական զօրահանդէս հեծեալ գրենադէրների եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թեոդորովնայի ուլանեան գնդերի համար, այդ գնդերի տօնի պատճառով։—Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ յանուն գաղտնի խորհրդական Նիկոլայ Տէրէշչէնկոյի, որով շնորհվում է նրան Սպիտակ արծիւ շքանշանը։

ԲԵՐԼԻՆ, Վալդէրզէէ հեռագրում է Պեկինից. «Վանի հիւսիս-արեւմտեան կողմում, 28 քիլոմէտր դէպի արեւմուտք Պաոտինֆուից, տեղի ունեցան նոր ընդհարումներ «Մեծ-բռունցքի» ոյժերի մի մասի հետ, որոնք առաջ էլ պարտութիւն էին կրել։ Ապստամբների կորուստը հաւասար է 110 մարդու։ Մեզանից վիրաւորված են երկու հոգի»։

ՋԵՐՆԻԳՈՎ։ Ս. Նիկողայոսի եւ Հաժբարձման տօների առիթով եկել են բազմաթիւ ուխտաւորներ Ռուսաստանի բոլոր անկիւններից։

ԿԻԵՎ։ Այս մայիս ամսում նկատվում է ուխտաւորների չը տեսնված բազմութեան համախմբումն։

ՎՕԼՕԳԴԱ։ Եղանակը տաք է. գարնանացանը ամեն տեղ բաւարար է. աշնանացանը լաւ է։

ՄԱԴՐԻԴ։ Մինիստրների խորհուրդը զբաղվեց ընտրութիւններով։ Պաշտօնական տեղեկութիւններով, որոնք դեռ եւս լիակատար չեն, ազատամիտները ստացել են 244 տեղ, պահպանողականները — 81, տէտուանականները—12, հանրապետականները—16, դամազականները—13, բօմերիստները—14, միւս խմբերը—22։

Կ. ՊՕԼԻՍ։ Ի նկատ առնելով, որ շատ հարցեր, որոնք կապ ունէին պօստի առիթով ծագած տարաձայնութիւնների հետ, բաւարար վճիռ ստացան, նոյն այդ տարաձայնութիւնները կարող են վերջնականապէս լուծված համարվել։ Բոլոր օտարերկրեայ պօստատները մայիսի 10-ից վերսկսեցին պօստային ծանրոցքների ուղարկումը։ Օտարերկրեայ նաւերն եւս վերսկսեցին Թիւրքական պօստային ծանրոցքների ընդունելութիւնը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ամեն կողմերից ստացվում են տեղեկութիւններ, որոնք հաստատում են, թէ Կապի գաղթականութեան եւ Օրանժեան հանրապետութեան ապստամբ զօրաբաժինները հրաման են ստացել կենտրօնանալու։ Զինուորական իշխանութիւնները ենթադրում են, որ կենտրօնացած զօրքերի հրամանատարութիւնը իր վրա կառնի Դէվէտ, բայց նրա ուղեւորութեան մասին դէպի Կապի գաղթականութիւնը առ այժմ ոչինչ յայտնի չէ։

ՊՕՐՏ ԵԼԻԶԱԲԷԹ։ Այստեղ պատահեցին ժանտախտից հիւանդանալու երկու դէպքեր։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Նախկին Նախագահ Պրէտորիուս վախճանվեց մայիսի 6-ին Պոտչեֆստրօմում երկու օրվայ հիւանդութիւնից յետոյ։ Աւելի քան 1000 բնակիչներ եւ փախստականներ ներկայ էին թաղմանը։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Պարլամէնտի երկու ժողովները ընդունեցին զօրքի նոր կազմակերպութեան վերաբերեալ կոմպրոմիսը։

ՊԱՐԻԶ։ Ռուսական փոխառութեան ստորագրութիւնը ահագին է։ Վաղը կը սկսեն վերադարձնել տուած փողերը՝ 90% ոչ բոլորովին վճարված օբլիգացիաների գրվողներին, իսկ 50%՝ բոլորովին վճարված օբլիգացիաների գրվողներին։

ՀՌՕՄ։ Ուժբէրտօ թագաւորին սպանող Բրէշի ինքնասպանութիւն գործեց բանտում, կախվելով մի պարանից, որ նա հիւսել էր իր անդրավարտիկի կտորներից։

ՎԻԵՆՆԱ։ Խօսելով ունգարական պատգամաւորութեան մանամաջողվի առաջ եւրոպական պետութիւնների շահերի մասին, կոմս Գոլուխօվսկի յայտնեց նաեւ հետեւեալը. «Զը նայելով շատ անգամ նկատված վտանգաւոր նշաններին, այնու ամենայնիւ աջողվեց անցքերին խաղաղ ընթացք տալ։ Այժմ, աչքի առաջ ունենալով իրերի դրութիւնը մերձաւոր Արեւելքում, հազիւ թէ մէկը կարողանայ որոշել, թէ որպիսի հանգստացուցիչ եզրակացութիւն կարելի է հանել այդ դրութիւնից ապագայի համար, որովհետեւ նոյն իսկ Աւստրօ-Ունգարիայի եւ Ռուսաստանի մէջ այժմ գոյութիւն ունեցող համաձայնութիւնը մշտապէս չէ կարողանում գործադրվել աջողութեամբ։ Որքան էլ երախտագիտութեան արժանի լինէր այդ համաձայնութիւնը, որ ծառայում է խաղաղութեան շահերին, բայց եւ այնպէս համարել նրան ընդհանուր միջոց ամեն տեսակ պատահարների դէմ—դա լոկ դատարկախօսութիւն կը լինէր»։ Մինիստրը լուրջ կերպով նախազգուշացնում է այդ տեսակ բացատրութեան դէմ։ «1897 թւի համաձայնութիւնը շատ գնահատելի գրաւական է, բայց կարծել, թէ նա կարող է ամեն տեսակ բռնկումների առաջն առնել, կը նշանակէ հետեւել ջայլամի քաղաքականութեան։ Մի քանի անհաճոյ նշաններ պահանջում են առանձնապէս արթուն հսկողութիւն, որպէս զի մի բարի օր չընկնենք այնպիսի դրութեան մէջ, որ անընդունելի լինէր։ Աւստրօ-Ունգարիան չէ ձգտում, ի հարկէ, հողեր գրաւելու ի վնաս միւս պետութիւնների։ Շատ անգամ կրկնելով անմիտ առասպելները, որոնք հակառակն են պնդում, միջոցների մէջ խարութիւն չը դնող ագիտատորները ձգտում են միայն այն բանին, որ գրգռեն հասարակական կարծիքը Աւստրօ-Ունգարիայի դէմ։ Բալկանեան երեւոյթներին, որոնք գրաւում են իրանց վրա Աւստրօ-Ունգարիայի առանձին ուշադրութիւնը, պատկանում են նաեւ մակեդոնական հարցը եւ նրա հետ կապված բոլգարական ագիտացիան։ Պետութիւնների կողմից պակաս չեն եղել նախազգուշացումներ բոլգարական կառավարութեան այն բանում, որ նրա զիջող թոյլտուութիւնը քիչ մեղաւոր չէ այժմեան դրութեան մէջ։ Սակայն քիչ ժամանակ առաջ ուշադրութեան առնելով պետութիւնների խորհուրդները, Բոլգարիան միջոցներ ձեռք առաւ, որոնք ապացուցանում են, թէ նա մտադիր է վերջապէս սանձահարել այն կոմիտէտը, որ իսկապէս դարձել է պետութիւն պետութեան մէջ։ Վերին աստիճանի ցանկալի էր, որ բոլգարական կառավարութեան ազնիւ վերաբերմունքը լրացնվէր մակեդոնական վիլայէթի վարչական կազմութեան բարեփոխմամբ, որովհետեւ Թիւրքիայի ձեռնարկած հարկադրական ընդարձակ միջոցները միայնակ չեն կարող նպաստել այդ շրջանի կատարեալ խաղաղացմանը։ Դժբաղդաբար, Մակեդոնիայի դրութեան մէջ շատ բան ցանկալի է փոխված տեսնել։ «Սերբիայում,—շարունակեց մինիստրը,—նոր սահմանադրութիւնից սպասում են քաղաքական դրութեան ամրապնդումն եւ կամենում են ամեն ջանք գործ դնել պետական կարգը բարեփոխելու համար։ Աւստրօ-Ունգարիան կարող է միայն աջողութիւն ցանկալ նրան, յուսալով, որ Սերբիան կը խուսափի այն բոլորից, ինչ որ կարող է խախտել նրա բարի յարաբերութիւնները Աւստրօ-Ունգարիայի հետ եւ սառեցնել կայսրութեան բարեացակամութիւնը դէպի հարեւան պետութիւնը»։

ՎԻԵՆՆԱ։ Ունգարական պատգամաւորութիւն։ Արտաքին գործերին վերաբերեալ յանձնաժողովում Գոլուխօվսկի, զանազան հարցերի վրա մանրացոյց անելով, բացատրեց, որ Թիւրքական պօստային հարցը կարող է այժմ կարգադրված համարվել։ Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ համաձայնութեան, մինիստրը մանրացոյց է անում յաճախակի տուած այն բացատրութիւնների վրա, որ Պետերբուրգում չորս տարի առաջ տեղի ունեցաւ մանրամասն բացատրութիւն, որի ժամանակ պարզվեց, որ Աւստրօ-Ունգարիայի եւ Ռուսաստանի միջեւ գոյութիւն չունեն ոչինչ այնպիսի տարաձայնութիւններ, որոնց, բարի ցանկութեամբ, կարելի չը լինէր խաղաղ ճանապարհով կարգադրել ի փոխադարձ բաւարարութիւն։ Իւրաքանչիւր ծագող հարցի համար այդ պատճառով կարելի է գտնել ելք, որը ըստ կարելոյն կը պատասխանէր այն շահերին, որոնք հիմնված են իրաւունքի վրա, առանց վնասակար ազդեցութիւն գործելու Աւստրօ-Ունգարիայի եւ Ռուսաստանի միջեւ եղած յարաբերութիւնների վրա։ Երկու պետութիւնների ձգտումներն եւս ուղղված են դէպի այն, որպէս զի պաշտպանեն բալկանեան պետութիւնների ինքնուրոյնութիւնը եւ թոյլ տան նրանց, որ իրանք կարգադրեն իրանց սեփական ներքին գործերը, ոչ մի ազդեցութիւն չը գործելով նրանց վրա։ Մինիստրին զարմացնում է, որ պատուիրակ Արկօվսկի սպասում էր յիշատակութեան իր, մինիստրի, ճառի մէջ Ֆրանս-իտալական տեսակցութեան մասին Տուլոնում։ Եթէ մի այդպիսի տեսակցութիւն քննութեան առարկայ կարողանար դառնալ աւստրօ-ունգարական մինիստրի քաղաքական ճառի մէջ,—դա մեծ յաւակնոտութիւն կը լինէր։ Մինիստրը շատ անգամ կրկնում է, որ նայում է երեքպետեան դաշնակցութեան վրա, որպէս իր քաղաքականութեան մի անսասան հիմքի վրա, եւ որպէս լրումն դրան, պէտք է լինի, ըստ կարելոյն, դաշնակցութեան մասնակիցների կատարեալ համաձայնութիւնը ուրիշ պետութիւնների հետ։ Այսպէս, Աւստրօ-Ունգարիայի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ մօտ ժամանակներից սկսած առանձնապէս բարեկամական դարձան։ Եթէ մի այդպիսի բան տեղի կունենայ Իտալիայի եւ Ֆրանսիայի միջեւ, մինիստրին այդ բանը ոչ միայն չի անհանգստացնի, այլ նա, ընդհակառակն, պէտք է դրա մէջ հանգստութեան շարժառիթ տեսնէ։ Զեկուցանողի նկատողութեանը մակեդոնական հարցի մասին, մինիստրը մանրացոյց է անում իր նախընթաց ճառի համապատասխան մասի վրա։—Այն հարցին, թէ կարող է արդեօք մինիստրը յոյս դնել Սերբիայի վրա նոյնպէս

հաստատ կերպով, ինչպէս եւ տարի ու կէս առաջ, Գոլուխովսկի պատասխանում է, թէ իր համար կատարելապէս պարզ չէ հարցը. «Լաւ յարաբերութիւնները մեր եւ Սերբիայի միջեւ,--ասաց մինիստրը,—գոյութիւն ունէին այն ժամանակ, գոյութիւն ունեն եւ այժմ, եւ որովհետեւ մեր կողմից ամեն բան անվում է, որպէս զի այդ կողմից ոչինչ փոփոխութիւն չառաջանայ, ուրեմն պէտք է ենթադրել, որ ապագայում եւս այդ բարի յարաբերութիւնները կը պահպանվեն յօգուտ իրան՝ Սերբիայի, բայց ոչ մի մինիստր չէ կարող յանձն առնել երաշխաւորութիւն ուրիշ պետութիւնների ընթացքի համար ամեն տեսակ հանգամանքներում։ Մենք միշտ կաշխատենք պահպանել լաւ յարաբերութիւններ բոլոր ուրիշ պետութիւնների հետ, եւ ոչ ոքի ետեւից մենք չենք վազի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օրէնսդրութիւնների ժողովածուի մէջ հրատարակված է Պետական Խորհրդի նոր հիմնարկութեան մասին։

Մայիսի 11-ին կայացաւ ս. լուս. Կիրիլը եւ Մէթոդիի օրվայ տօնախմբութիւնը։ Կազանի տաճարում հաւաքվեցին մօտ 2700 ուսանողներ, եւ եկաւ ս. սինոդի օբէր պրոկուրոր Պոբէդոնոսցեվ։ Պատարագ մատուցեց միտրոպոլիտ Անատոնի։

ՎԻԼՆԱ։ Այսօր, հոգեհանգստեան պատարագից յետոյ, կատարվեց գեներալ-ադիւտանտ Տրոցկու մարմնի թաղման կարգը։ Մարմինը տարվեց հանգուցեալի կալուածքը Զէրնիդովեան նահանգում։

ՊԷՐՄ։ Մայիսի 7-ին հրդեհը լափեց մի գիւղ. այրվեցին 500 տներ, ցորենը եւ տաւարը. ոչինչ չը կարողացան փրկել։ Հրդեհի տեղը գնաց նահանգապետը։ Կազմակերպվում է կոմիտէտ հրկիզեալներին օգնելու համար։ Եղանակը չոր է, քամոտ, խիստ շատ են անտառային հրդեհները։

ՖԻԼԻՊՊՈՊՈԼ։ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ, Պարիզի թիւրքաց դեսպանութեան խորհրդական Նաբի-բէյ, առաջին, երկրորդ եւ երրորդ քարտուղարները, նոյնպէս եւ այդ դեսպանութեան կցորդը եւ Պարիզի թիւրքաց ընդհանուր հիւպատոսը հաղորդեցին Իլդիզ-Քիոսկ, որ հարկադրված կը լինեն երիտասարդ թիւրքերի շարժման հետ միանալ, եթէ բաւարար չափով ոռճիկ չը տրվի իրանց։

ՊԷԿԻՆ։ Վալդերզէէ յետաձգեց ենթադրված արշաւանքը, բայց ուղարկեց փոքրաթիւ ոյժեր աւազակութիւնը ճնշելու համար։ Անգլիացիները նոյնպէս փոքրիկ զօրաբաժին ուղարկեցին այդ նպատակով։

ՊԷԿԻՆ։ Բոլոր դեսպանները, բացի միմիայն Բօկգիլից, համաձայնվեցին ներմուծման մաքսահարկը աւելացնել գնի հինգ տոկոսի չափով։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ինպէս հաղորդում են, հայլէնդէրների հետեւակ գունդը յանկարծակի յարձակումն գործեց Բրանֆորդի շրջանում եւ ցրվեց թշնամուն, որի ժամանակ 12 բօէրներ սպանվեցին, 13 վիրաւորվեցին եւ 12 գերի ընկան։

ՍՕՈՒՏՀԱՄՊՏՕՆ։ Մինչեր ժամանեց հարաւային Աֆրիկայից։

ՄԱԴՐԻԴ։ Լուր է պտտում Սագաստայի եւ Մօրէի միջեւ եղած տարաձայնութեան մասին ընտրութիւնների ժամանակ եղած խնդիրների առիթով։ Մինիստրական ճգնաժամը հնարաւոր է համարվում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԶԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
„ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ“
№ 2
1) „ՎԱՏ ՅԱՒ“
8 նկարով
Գինն է 6 կոպ.
2) «ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ» Գինն է 75 կ.
Ծախվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում եւ հեղինակի մօտ։ Հեղինակի հասցէն. Тифлисъ. Доктору Ваг. Арцруни. 1—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա. Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Ձիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), և վեներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղիկ է կտրում նոյնպէս և կիրակի, առաւօտեան ժամի 9—10.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ս. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Վրաստանի եւ Իմերէթի հայոց վիճակային կոնսիստորիայի ատենի մէջ նշանակված է աճուրդ սոյն մայիսի 16-ին, առանց կրկնաճրդի, կապալով տալու եկեղեցական մեծ եւ փոքր կղզիները, որոնք գտնվում են Վանայ աւագ եկեղեցու հանդէպ։ Աճրդին մասնակցել ցանկացողները պիտի ներկայացնեն պահանջած գրաւական։
Անդամ կոնսիստորիայի՝
2—3 Զաքարիա քահ. Զարդեղեանց

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԴԻՐԵԿՏՕՐԸ
յայտնում է, որ առաջիկայ 1901—1902 ուսումնական տարվայ համար չեն լինի աշակերտների ընդունելութիւններ ԱՒԱԳ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ, ԵՒ ԱՌԱՋԻՆ ՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ տեղ չը լինելու պատճառով։
(ապ. 22, 25, 26, 29, մայիսի 6 եւ 13)

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, մայիսի 13-ին
ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ
բարեհաճ մասնակցութեամբ տիկ. Մայսուրեանի եւ պ. Սուքիասեանի, այլ եւ մասնակցութեամբ տ. Զաբէլի, օր. Յակոբեանի, պ.պ. Յարութիւնեանի, Մամիկոնեանի, Ալիխանեանի, Միրզոյեանի, Բաբուրեանի եւ այլն
կը ներկայացնէ
ԹԱԳԻ ՀԱՄԱՐ
Ողբ. 5 գործ., հեղ. Կոպպէի, թարգ. Մանուչարեանի
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան
Վաղօրօք վերցրած տոմսակները «Դիւթական հէքիաթ» պիէսայի ներկայացման համար, որը տրվելու էր մայիսի 10-ին, իսկական են կիրակի օրվայ՝ մայսի 13-ի ներկայացման։
(հ. չ. կ.) 3—3

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Այսօր 16-ին մեկնում է կովկասեան հանքային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս, կընդունէ հիւանդներին։
Հասցէն՝ Пятигорскъ, Верхній бульваръ, д. Карповой. 2—10

Լոյս տեսաւ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ
աշխատութիւնը։
Գրքի երեսը զարդարված է նկարիչ Վարդգէս Սուրէնեանցի նկարով։
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Հեղինակի հասցէն՝ Москва, Садовая—Каретная, меблир. ком. Носальскаго, № 10. Александру Цатуряну. 2—4

„ԵՂԹԱՅՑ“
Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
յայտնում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ երրորդ 10% վճարը, այսինքն իւրաքանչիւր փային 10 ռուբլի, նշանակված է սոյն մայիսի 11-ից մինչեւ 21-ը ներփակված։
Բաժնետէրերը վճարման ժամանակ պէտք է ներկայացնեն բաժնետոմսերը։
Նաեւ յիշեցնում է ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածը։
Ընկերութեան դրասենեակը՝ Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի։
(1, 5, 10, 13, 14 եւ 20) 4—6

СЕКРЕТЪ КРАСОТЫ
ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ
А. СІУ и К°
МОСКВА. 20 коп. кус.
М. 109486

ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
խնդրում է այն անձանց, որոնք ունեն նոր պիէսաներ՝ թէ ինքնուրոյն եւ թէ թարգմանական՝ բարեհաճեն այդ մասին շուտափոյթ հաղորդել Բագու, պ. Ն. Դաւթեանին (Баку, Нерсесу Давтяну)։
Ընդունված պիէսաների համար հեղինակներին կամ թարգմանիչներին կը տրվի բաւարար վարձատրութիւն։ 3—5

Р. К. и К°
ЗАВЛЕЧ. ДЕП. КЛЕЙМО ТОРГ. И МАНУФ.
ФАБРИЧНО-ТОРГОВОЕ ТОВАРИЩЕСТВО
Р. КЁЛЕРЪ и К°
ВЪ МОСКВѢ, ИЛЬИНКА, СРЕДНІЕ ТОРГ. РЯДЫ.
ОТДѢЛЕНІЯ: ВЪ С.ПЕТЕРБУРГѢ, САРАТОВѢ, ВЛАДИВОСТОКѢ И НИЖЕГОРОДСКОЙ ЯРМАРКѢ.
Чистый Химикъ, СѢРНОКИСЛЫЙ и СОЛЯНОКИСЛЫЙ.
Представляется полная возможность запастись этимъ необходимымъ въ каждомъ домѣ лѣчебнымъ средствомъ за самую недорогую цѣну съ вѣрнымъ ручательствомъ Т-ва Р. Кёлеръ и К° за химическую чистоту препаратовъ. Непремѣнное условіе: требовать на каждой стеклянной банкѣ, съ фирменнымъ ярлыкомъ и клеймомъ Т-ва неповрежденную проволочную сѣтку съ пломбой Товарищества: Р. К. и К°.
Цѣна 1 руб.
КЁЛЕРСКАЯ КАРМАННАЯ ДОРОЖНАЯ АПТЕЧКА
содержитъ 20 необходимѣйшихъ средствъ и предметовъ для подачи первоначальной помощи при всѣхъ наичаще встрѣчающихся заболѣваніяхъ, пораненіяхъ и проч. съ наставленіемъ.
Продажа особымъ циркуляромъ Медицинскаго Департамента отъ 24 декабря 1897 г. № 8906 разрѣшена не только въ аптекахъ, но и всюду: въ магазинахъ, на желѣзнодорожныхъ станціяхъ, пароходныхъ пристаняхъ и т. д.
КЁЛЕРСКІЕ УСОВЕРШЕНСТВОВАННЫЕ КОЛЬДЪ-КРЕМЫ И ГУБНАЯ ПОМАДА
всегда отличаются своею свѣжестью и проявляютъ свои превосходныя свойства во всѣхъ случаяхъ ихъ употребленія.
КЁЛЕРСКАЯ Душистая Вода
ЛУЧШЕ ВСЯКИХЪ ОДЕКОЛОНОВЪ.
КЁЛЕРСКІЕ ЦВѢТОЧНЫЕ ОДЕКОЛОНЫ
ВСѢХЪ ЗАПАХОВЪ
ПО НѢЖНОСТИ И СТОЙКОСТИ АРОМАТА
внѣ конкурренціи.
КЁЛЕРСКІЕ Z—ДУХИ
ФАБРИКИ Т-ВА Р. КЁЛЕРЪ и К°.
ЭТИ ДУХИ ПРЕДСТАВЛЯЮТЪ СОБОЮ ПОСЛѢДНЕЕ СЛОВО ПАРФЮМЕРНАГО ИСКУССТВА.
Кёлерскіе Z духи, не смотря на всю свою нѣжность, очень концентрированы и поэтому ихъ пріятный запахъ развивается при употребленіи только мало помалу И ЗАТѢМЪ УДЕРЖИВАЕТСЯ НѢСКОЛЬКО СУТОКЪ.
КЁЛЕРСКІЕ СГУЩЕННЫЕ Желе, Кисель, Мороженое РАЗНЫХЪ ВКУСОВЪ И КЛЮКВЕННЫЙ КВАСЪ.
Вкусно! Удобно! Дешево!
ВЫСШАЯ НАГРАДА GRAND PRIX НА ПАРИЖСКОЙ ВЫСТАВКѢ 1900 г.
ВЪ ПРОДАЖѢ ВЕЗДѢ у ВСѢХЪ БОЛѢЕ ИЗВѢСТНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.
Шифорский.
(Սպ. 12, յտն. 2, 12, 23).

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Мая 1901 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27